



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**  
**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**  
**ՏԵՂԱԿԱԼ**

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“.....” ..... 2020թ.

N.....

«ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՍՊԸ-ի  
 տնօրեն Է.Մովսիսյանին  
 Հասցե՝ ք. Երևան, Շիրակի 74ա

**ԾԱՆՈՒՑՈՒՄ**

(Վարչական վարույթ հարուցելու և լուծման իրականացնելու մասին)

Հարգելի պարոն Մովսիսյան

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով և 35-րդ հոդվածով՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1712-Ա հրամանով հարուցվել է վարչական վարույթ «ՄՈՎՍԻՍՅԱՆ» ՍՊ ընկերության կողմից թույլ տրված խախտումների հիմքով:

Սույնով Դուք տեղեկացվում եք, որ վարչական լուծմանը տեղի կունենան 2020 թվականի դեկտեմբերի 09-ին՝ ժամը 11:30-ին, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության շենքում (հասցե՝ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, 6-րդ հարկ):

Վարչական վարույթին կարող եք մասնակցել ինքնուրույն կամ Ձեր ներկայացուցչի միջոցով: Ինդրում ենք վարչական վարույթին ներկայանալ անձը հաստատող փաստաթղթով և (կամ) լիազորագրով: Պատշաճ ծանուցված մասնակցի չներկայանալը արգելք չէ վարչական վարույթի իրականացման համար:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով՝ ընդերքօգտագործման իրավունքը դադարում է, եթե լիազոր մարմնի սահմանած ժամկետում (90 օր) ընդերքօգտագործման իրավունք կրողը չի վերացրել զգուշացման հիմքերը:

Կից ներկայացվում է Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի նոյեմբերի 25-ի թիվ 1712-Ա հրամանը – 2 թերթ:

X

---

Հարգանքով՝

Լ. Շուշանյան

